

## ՕԼԻՎԻԵ

Ե

Վերջապէս կու գար կը մօտենար նշանաւոր օրը . չորս տարի անցեր էր մեր պանդխառութեան վրայ : Իրիկուն մը յանկարծ իմաց տուի կասդոնի որ ճամբորդ ենք :

— Ի՞նչո՞ւ համար , պատասխանեց . հանգիստ կեցեր ենք հոս , չշարժինք տեղերնէս :

— Մտածելիք չկայ , պատասխանեցի . բնակութիւնիս իմացուեր է . կասկածաւոր դէմքով մարդիկ տեսայ գեղին մէջ . կեանքդ հոգա :

Զարմանալի բան . խեղճը կ'ուզէր ապրիլ . Աստուած խենթերէն ալ չվերցըներ կենաց բնածին սէրը : Ելաւ ետեսս եկաւ ու երրոր կառք մտանք ,

— Ո՞ւր կ'երթանք , հարցուց :

— Դէպ ՚ի Ռուսաստան , ըսի առանց շփոթելու :

Խոր մը հառաչեց , եղքը գլուխը բարձին տուաւ ու ընկղմեցաւ առջի անդպայութեանը մէջ , ուսկից թօթափեր էի զինքը քիչ մը ատեն :

Չիերը կ'արշաւէին . և կառքն իրեք օր իրեք գիշեր անընդհատ քալեց : Առաջուց հոգացեր՝ ուտելիք դրեր էի կառքին նստարաններուն մէջ , որպէս զի պանդոկ չինանք : Մըրկի պէս կ'երթայինք . և բոլոր ճամբորդութեան միջոց՝ կասդոն բան մը չհարցուց , և անցած տեղերնուս տեսարանները բնաւ չնկատեց : Մի անգամ միայն ցրտէն բերանը բացաւ ու դողդըղալով – ծուրտ է հոս , ըսաւ ինծի , ես ալ – չասներու վրայ ենք՝ պատասխանեցի : Եւ կըկնոյվը ծածկեց ինքզինքը :

Չորրորդ գիշերն ուշ ատեն տիսուր օդով մը կառքը կանկ առաւ բնակարանի մը առջև , ուր ամենեկն ճրագչէր երևնար : կառքէն վար իջեցուցի զկասդոն և խարխափելով երկայն բարակ սրահներու մէջէն անցուցի : Մութանեկի մը դուռն որ բացի ,

— Ո՞ւր ենք , հարցուց :

— Մոսկուայի մօտ գեղի մը մէջ : Կասդոն զարմանք ցուցուց տան խաւարին վրայ . պատասխանեցի որ վախնակութէն ետևնէս ինկողներ կան՝ չուզեցի կասկած տալ : Համոզուեցաւ խօսքիս , և յոդնած դադրած ըլլարով՝ առանց լուսի անկողին մտաւ և խորունկ քուն եղաւ :

Զ

Երրոր արթնցաւ կասդոն , շատոնց լուսընցած էր . աշնանային զուարթ արեգակը բոլոր իր ճառագայթները սենեկին մէջ սփուեր էր . անոյշ քամի մը անտառաց անուշահոտութիւններովը պարարեալ՝ կիսաբաց պատուհանէն ներա կը սահէր , և իր հեշտափ բուրութները կասդոնի ներսը կը ծաւալէր . խեղճն առանց անդրադառնաւուելով , անոնց ախորժական և խորհրդաւոր ազգեցովթեամբը կը քաղցրանար ; Աչքերն արևուն պայծառ լուսէն առնուելով , մէկէն գոյցեց . և մնաց քանի մը վայրկեան այնպիսի վիճակի մը մէջ որ ոչ արթնութիւն է և ոչ քուն , միանգամայն ականջը կու գային այն ամէն ձայներն որ ատենք արթնցած միջոցը կը լսէր : Այս ձայները հովուաց երգերն էին , տատրակաց մնչիւնը , հեռաւոր ջրվէժներու շառաչը , ջաղացքին շոփնդը . իսկ մօտանց՝ տղոց ուրախութեան աղաղակներն որ հրախաղից ծրարիկներուն պէս առաւօտեան զով և քաղցրահնչիւն օդուն մէջ կը բարձրանային : Այս աղաղակներն ու գիւղային ներդաշնակութիւնքը լսելով տարտամ՝ կերպով մը իր երիտասարդութեան երջանիկ օրերը միարը կու գային : Խողուկ ձայնով զաւկին ու կնոջ անունը մրմնչեց . և արցունք մը փրթաւ աչքէն ու արտեսանունքը թըրջեց : Սակայն խոռվացյղ մտածութիւնքն որ վայրկեան մը մարած էին , սկսան ողք ելլել ու մրմուալ սրտին մէջ : Յանկարծ քիչ մը ինքզինքը վերվերուց՝ թերերը կոթնցուց անկողնին ,

և զարմանօք չորս կողմը նայեցաւ : իր տունն էր տեսածը , իր հարց բնակարանը , այն յարկն որ իր բարեբաստութեանն օթեան եղած էր երկայն ատեն : Ամէն քովը տեսածները կը ճանչնար . գլքերը , նկարները , կահ կարասիքը , օթոցներն իրենն էին , և այն ամէն ոչինչ բաներն՝ որոնցմով բնակած տեղերնիս աշքերնուս առջև սիրելի կենդանութիւն մը կը ստանան : Ճեռքը ճակտին դրաւ մէյ մը շփեց , և մտածեց որ չըլլայ թէ խարէութիւն էր տեսածը կամ երազ : Գլուխն որ դարձուց , անկողնին քովը կնիկն ու բժիշկը տեսաւ ոտքի վրայ , որոնք ծիծաղերես իրեն կը նայէին :

— Բարի լցու , ազնիւ կոմս , ըստ զուարթութեամբ ծերունի բժիշկը . աս առաւօտ աշքիս աղէկ կ'երևաս : Ազատեցանք փորձանկքէն , բայց հազիւ հազ . կրնանք թեսէոսի պէս պարծիլ որ դժուկի ափունքը տեսանք :

— Ի՞նչ , ըստ Վալկրան տիկինը բժշկին , գու ազատեցիր զինքը :

— Ե՞ս ազատեցի . հէ հէ , կոմնն ինքդինքը ազատեց : Չուզեց անխելքաբար մեռնիլ . և շատ աղէկ ըրաւ , որովհետեւ կեանք սիրելու շատ պատճառներ ունի :

— Սիրելի կասդոն , աղաղակեց Վալկրան տիկինը սիրավիր ճայնիւ ... գիտես , սիրելիս , որ սրտերնիս վախ ձգեցիր . գիտես որ կատաղութեանդատենը կնիկդ չէիր ճանչնար : ... Հիմա կը ճանչնաս զիս , անանկ չէ . ալ չես վախնար ինծմէ : Ա՛հ , ես կը սիրեմ զքեզ , քեզի հետ կենդանութիւն կ'առնում :

— Ճեսնանք մէյ մը , ի՞նչ կ'ըսէ երակը , զուզեց բժիշկը կասդոնի ճեռքը բռնելով :

— Ի՞նչ կ'ըսես , հարցուց կոմսուհին բժշկին :

— Ուժ օր չերթար կոմնն ոտքի վրայ կ'ելլէ . և անտարակոյս եմ որ սիրով կ'առնէ հիմա ճեռքէդ արգանակ մը :

Նոյն վայրկենին Ժէրմէն ներս մտաւ .

տիրոջն անկողնին մօտենալով՝ առողջութիւնն հարցուց , իրեւ թէ առջի օրը տեսած ըլլար զինքը : Կասդոն մէյ մը կնոջը՝ մէյ մը բժշկին կը նայէր . երազ կը կարծէր տեսածը : Մէյ մը ալ յանկարծ սաստիկ մը դողաց ու անկողնին մէջ ելաւ նստաւ... տղու ախորժելի ձայն մը լսեր էր պատուհանին առջեւ : Վալկրան տիկինը պատուհանը գնաց , վարագոյրը վերուց ու աս պարզ խօսքերն ըստաւ .

— Օլիվիէ , եկուր նայիմ , բարի լցու ըսէ հօրդ :

Դուռը բացուեցաւ , աղուորիկ տղայ մը աշխուժութեամբ ներս մտաւ . անկողնին վրայ ցագեց , մատղաշ թևերովը կասդոնի վիզը պղուեցաւ , ու

— Բարի լցու , հայրիկ , ըստաւ...

Այո , ինքն իսկ Օլիվիէ էր . մօր մը աչքն ալ կրնար խարուիլ : Այն Օլիվիէն էր որ հայրն իրեն հետ տունս բերեր էր այն ճախորդ օրը : Նոյն կապոյտ վրձիտ աշքերն ունէր , նոյն փափկիկ ու ծիծաղկոտ բերանը , նոյն խարտեաշ ու բարակ մազերը : Այ կողմի յօնքին մօտ նոյն սեսրուկ նշանն ունէր , և քըթին արմատին վրայ մորթին թափանց կութեանը տակ նոյն կապտագոյն երակը կ'երևար , որ լազուարթ քարէ մատնիի մը կէսը կը նմանէր : Կասդոն անշարժ էր , բայց ինքիրմէն դուրս ելած , անձայն՝ բայց աշքերը մեծ մեծ բացեր էր տղուն վրայ , և դողալով ու անյադ ցանկութեամբ ճեռքերն անոր զգեստներուն վրայ կը պտըտցընէր : Յանկարծ թափով մը բացաւ կամ լաւ ևս պատուեց տղուն բաճկոնակը , և մահացու վերքին նշանն անոր կուրծքին վրայ վինտուելով՝ երբոր սպիտակ ու միակտուր տեսաւ զայն փղոսկրէ թերթի մը պէս , զարմանքէն և մանաւանդ սրաին ուժգին յուզմանէն ինկաւ մարեցաւ՝ տղան դիրկը բռնած :

և

Երբոր ինքզինքը գտաւ , Վալկրան տիկինն ու բժշկը անկողնին քով նըս-

տած էին. Օլիվիէ ալ անկողնին ծայրը կը խաղար:

— Բարեկամք իմ, ըսաւ վերջապէս, ի՞նչ էր եղածն, ի՞նչ է որ կ'ըլլայ հիմա:

— Ի՞նչ եղաւ, պատասխանեց ծերունի բժիշկը: Ազնիւ կոմն, դու ծանր հիւանդացար. հիւանդութեանդ անունը մենք բժիշկքս ըղեղի մաշկին բորբոքումն կ'ըսենք. հասկըցա՞ր, բարեկամ: կը հարցընես թէ ի՞նչ կ'ըլլայ հիմա. արդէն կը տեսնես. առողջութիւնդ խելքդ վրադ բերաւ, և խելքիդ հետ երջանկութիւնը: Բնական հետեւանք մըն է ասիկա:

— Հայրիկս բժշկուեր է, հայրիկս ալ հիւանդ չէ... ոհ, ի՞նչպէս ուրախ եմ, ըսաւ Օլիվիէ պատկերներու գիրք մը խառներով, զոր կատոն օր մը Նանդ քաղքէն բերած էր որդւոյն:

— Ծղեղի մաշկին բորբոքումն, ինքիրեն կ'ըսէր կասդոն նուազ ձայնիւ... ի՞նչ կ'ըսես, ես խենթեցայ ուրեմն. առ ըսերով՝ խոռվայոյզ աչքով կը նայէր բժշկին:

— Հապա, բարեկամ. խօսքը մէջեր նիս մնայ՝ խելքդ բնական վիճակի մէջ չէր: Վեց շաբթուան մէջ ի՞նչ կտրընութիւններ չըրիր. անկողնիդ մէջ կեցած՝ շատ աշխարհներ քալեցիր Մարիոյ բարեկամիդ հետ:

— Վեց շաբթուան մէջ, աղաղակեց կամառն. ինծի համար գարեր անցան այն օրուընէն 'ի վեր որ....

— Այն օրէն 'ի վեր որ հիւանդացար, ըսաւ կոմնուհին խօսքը բերնէն առնելով: Ա՛հ, սիրելիս, մեղի համար ալ աս վեց շաբաթը վշտաց ու ցաւոց դարեր երեցան:

— Վեց շաբաթ, կը կրկնէր կասդոն:

— Ամիս ու կէսի ջերմն ու խենթութիւնը բաւական չես սեպեր. սրւոր նայեցէք, ըսաւ բժիշկը ծիծաղելով:

— Բայց ի՞նչպէս եղաւ այս ամէն բան, հարցուց կամառն կասկածու հետաքրքրութեամբ:

— Ես հիմա միովդ բերեմ ամէն բան, զրուցեց կոմնուհին՝ բանուածքի մը զրաղած՝ զոր ատենօք կասդոնի աշ-

քին առջեւ սկսեր էր՝ բայց եափը չորս տարի մէկդի թողեր: Օլիվիէի հետ մեր աղնիւ դրացւոյն տունը գացեր էիր կերակուր ուտելու: Օրերէ 'ի վեր օդը մրրկալից ըլլալուն՝ դրուխոդ հիւանդագին էր: Կերակրէն վերջը, որ լսեր եմ թէ շատ զուարթ եղեր է....

— Զափէ դուրս զուարթ, ըսաւ բժշկը խորհրդածութեամբ:

— Դարատափը գացեր էր, և հօն բարեկամներդ անդութ զուարծութեամբ մը՝ Աստուծոյ ատեղծած թրոշուններուն վրայ հրացան պարպելով կը զուարծանան եղեր: Մարիոյ կ'ըսէ թէ կրակէ էր դէմքդ ան միջոցին:

— Կոմնը կերակրոյ վրայ վուվրէի գինի տնկեր էր առատութեամբ, վրայ բերաւ բժիշկը:

— Առջի օրուան ինծի տուած խոստմունքդ մոռնալով, հրացան առիր ձեռքդ... Մարիոյի հրացանը...

— Անանկ է, անանկ է, ճիշդ ըսիր, աղաղակեց կասդոն, որուն մոքին մէջ 'ի նմին միջոցի կ'արթննային բանավարութիւնն ու խենթութիւնը:... Մարիոյի հրացանն առի... Օլիվիէ քսան քայլ հեռու կեցեր էր... յանկարծակի թափով մը զէնքը վեր վերուցի... զնտակը թուաւ...

— Եւ դու վար ինկար, ըսաւ անխուով կերպով բժիշկը. կայծակ զարկաւ գլխուդ: Ճես տես ինչե՞ր կը բերէ մարդուն գլուխո՞ կերակրոյ վրայ վուվրէի գինի շատ խմելը...

— Եւ իր կնոջ խօսքը մտիկ չընելը, զրուցեց կոմնուհին. սիրելի, Աստուծ պատժեց գքեզ:

— Ի՞նչ հանդիպեցաւ ան ատեն, հարցուց կամառն ճակտին քրտինքը սրբելով:

— Ի՞նչ որ պիտի հանդիպէր, պատասխան տուաւ ծերունին: Պատզարակի վրայ դրած տուն բերին զքեզ: մտածէ թէ ի՞նչպէս յանկարծակիի եկաւ քու ամենալաւ կոմնուհիդ, որ երթալու ատենդ առողջ ու կայտառ ձըգած էր զքեզ: Երկու ժամ վերջը հիմակուան պէս անկողնիդ քով նստեր

էի . և ճշմարիտը լսել կ'ուզես նէ , բը-  
ժրշկուելուդ յոյս չունէի : Չես զիտեր  
ուրեմն , բարեկամ՝ , Վուվիրէի գինուոյն  
զօրութիւնը . հաւտա՝ ըղեղի մաշկին  
բորբոքումն է շիշի մէջ դրած : Երկրորդ  
օրը սաստիկ տենդով բռնուած էիր , և  
անանկ կատաղի խենթութեամբ՝ որ  
անկէց աւելի ոչ ոք ունեցած է : Տէր  
Աստուած , ինչեր կը ջարդէիր . ինչեր  
կ'երևակայէիր . ինչ ցնողքներ կը ստեղ-  
ծէիր : կը յիշես տեսած աղուոր ե-  
րազներդ որոնցմով զմեզ կը չարչա-  
րէիր :

— ԱՇ , ահաւոր երազներ , բասա-  
կասդոն ձեռքովն երեսը գոցելով :

— Այո , զաւակս , պատախանեց  
բժիշկը , այո , ահարկու երազներ : ...  
Սա պզտիկիկը նայէ , ըսաւ Օլիվիէն  
ցուցընելով . նշան մը կը տեսնես որ  
կործքին վրայ հրացանի գնտակ ա-  
ռած ըլլայ : Իսկ քու ազնիւ ու սրանչե-  
մի կնիկդ . ինչպէս կարելի էր որ դահ-  
ճին ձեռքն ուզէր գքեզ մատնել :

Մն ատեն կասդոնի դէմքը պայծա-  
ռացաւ . և չորս տարիէ 'ի վեր տեսած  
ուրուականներն աներեւութացան աշ-  
քէն՝ արիւնաթաթաւ որդին ալ մարէն  
հանելով : Գրկուեցաւ կնոշն և որդւոյն  
հետ , և արտասուացն ու համբոյրնե-  
րուն թիւր շատ էր :

Նոյն միջոցին ես վրայ հասայ . օր մը  
առաջ զիս տեմնողը՝ խտալացի աւազակ  
կրնար կարծել , որովհետեւ ճամբորդու-  
թեանս միջոցն աւելի պէս երկնցեր էր  
մօրուքս . բայց ածելին մաքրեց սրբեց  
զան ու չորս տարուցնէ առաջ ունե-  
ցած դէմքս դարձուց ինծի : Նոյնպէս  
հագուեր էի ինչպէս այն օրն որ կաս-  
դոն տունս կերակրոյ եկեր էր : Զիս որ  
տեսաւ , այլայլով թիւն մը ու տարակոյս  
ունեցաւ . բայց ես բան չգիտոյող ձե-  
ւանալով՝ բժշկուելուն ուրախակցու-  
թիւնս ըրի , և կատակ չմնաց որ չըրի  
մէկտեղ ըրած ճամբորդութիւններ-  
նուա վրայ :

— Բան մը ըսեմ քեզի , վրայ բերի .  
այնչափ տկար խեկբով մարդ չէի կար-  
ծէր գքեզ : Ասկէ ետքը երբոր տունս

դաս կերակրոյ , առջեղ ջուր միայն  
պիտի դնեմ :

Աս ըսի ու համբուրեցի Օլիվիէն , զոր  
արդէն առաւօտը սիրեր էի . հին բա-  
րեկամի պէս կը վարուէր հետս :

— Կը ճանչնաս պարոնը , հարցուց  
կասդոն տղուն :

— Հօրս աղնիւ բարեկամն է , պա-  
տասխանեց մէկէն անմեղ տղան , որ  
աղէկ սորվեր էր իրեն տրուած դասը :  
— Օլիվիէ ատենզք աս անունը կու-  
տար ինծի : —

Մայրը , որ կասդոնի հարցմունքին  
վրայ վախէն դողացեր էր , հազիւ հազ  
կրցաւ ուրախութիւնը բռնել որ կրնար  
բանը մատնել . վազեց պագաւ իր զա-  
ւակը :

— Ալ բաւական է , ըսաւ բժիշկը ,  
շատ սիրու չանենք մէկէն առջի օ-  
րով . թողունք որ խեղճը հանգչի : Խըն-  
դրեմ նորհք ըրէք դուրս ելէք , որ հի-  
ւանդը հանգարտ թողունք :

Եւ գուրս հանեց զմեզ :

— Ազատեցաւ . ազատեցաւ ...

Եւ գրկախառնելով իրարու՝ ար-  
ցունքնիս մէկտեղ կը խառնէինք :

— Մայրիկ , ըսաւ պզտիկը՝ կոմսու-  
հայն զգեստէն քաշելով , աղէկ ըսի :

— Այո աղէկ ըսիր , ազնիւ դանձու՝  
որ կորուսեր էի և զտայ . սիրելի հրեշ-  
տակս՝ որ թուեր էիր և նորէն Աստուած  
դարձուց ինծի , պատախանեց կոմ-  
սուհին թևերուն մէջ վերցընեղով զա-  
նիկայ :

Է

իրօք կասդոն ազատեր էր . ամսը-  
ւան մէջ առաջին երջանկութիւնը գր-  
տուաւ . ամենայն բարեկամք , ծանօթք  
և ծառայք փոյթ կը տանէին խարէու-  
թիւնը գուրս չանելու , որով կասդո-  
նի խեկը գլուխն եկեր էր : Մեր միակ  
ուշադրութիւնն ու միակերպ խնամ-  
քը՝ զինքն իր կարծեաց մէջ պահելն  
էր . Օլիվիէ ալ մօրն արթնութեամբն  
ու զարմանալի բնածին ազդմամբ մը  
անանկ կը նմանցընէր իր ամէն ձե-

ւերն, ձայնին դարձուածքն և ընտանեկան զուրցուածքը, որ կասդոնի սէրը կը խաբուէր: Չորս տարուան սուգն ու այրիութիւնը վալկրան տիկնոջ դէմքին վրայ խորումկ հետք թողուցեր էին. բայց ինքն իսկ կասդոն այն աստիճանի փոխուած էր, որ չէր անդրադառնար կնոջ փոփոխութեան վրայ. թող որ կրնար ըսուիլ թէ այնշափ գիշեր անքուն անցուցած ըլլալով էրկանն անկողնոյն քով՝ բնականապէս դէմքը տժգունցեր ու թարշամեր էր, աչքերն ալ արցունքով մաշեր:

Սակայն քանի որ երիտասարդութեան ոյժն ու առողջութիւնը կը դառնար կասդոնի վրայ, անզգալի խոռովութիւն մը սրտին խորերուն մէջ կը ծըփէր: Ճշմարտութեան տարտամ գաղափար մը, որ երազներու մէջ ալ կը յայտնուի, կը սկսէր ծնանել մոտին մէջ ու վեր 'ի վերոյ մը բանալ զանիկայ: Թէպէտ խնամքնիս անպակաս, սակայն երբեմն երբեմն յանկարծական փայլակներով կը լուսաւորուէր ան անդնդոյն խաւարն, ուր ընկղմեր էին չորս զարհուրելի ու յուսահատութեան տարիներ. և կասդոն վհին եղերքը կեցած՝ դողալով անոր խորը կը դիտէր, և ինքն իրեն կը հարցընէր թէ արդեօք իրաւցընէ տենդն ու մոլեգնութիւնն անոր մէջի եղած բոլոր հրէշները ծներ էին:

Քանի մը շաբթէ 'ի վեր՝ կ'ուզէր տունս գալ. մենք այլ և այլ պատճառանքներով դէմ կեցանք: Որ մը առաւտանց մինակ տունէն դուրս ելաւ ու բնակարանս եկաւ. և դարատափն հասածին պէս՝ դժբաղդութեան տեղոյն վրայ կանկ առաւ:

Ինչուան այն օրը ընտանի ու բարեսէր էր բնաւորութեամբ. բայց անկէ ետքը սկսաւ գէշ ու գրեթէ վայրենութեան վայրկեաններ ունենալ: Երբեմն այն աստիճանի կը մաղձոտէր, որ կարելի չէր սթափել զինքը, և թէ որ Օլիվիէն տեսնար՝ կը զայրագնէր: Երբեմն ինքնարերաբար կասկածու աչքով մը կը դիտէր զանիկայ. Երբեմն ալ ուրա-

խութեամբ կը նայէր վրան. բայց այս ուրախութիւնը՝ խենթութենէն աւելի կակծեցուցիչ էր մեզի համար: Կը վախէինք իրեն թափանցուղութենէն, և ասկայն իր կուրութիւնն ալ կը տիրեցընէր զմեզ: Խմացեր էինք որ ան ատեն միայն կրնար բոլորովին առողջանալ, երբոր ճշմարտութեան ձախորդը լուրն առնուր և դիմանար. բայց բժիշկ կը գեռ սպասելու է կ'ըսէր. արդէն որուն ձեռքքը կը համարձակէր աչքին առջևէն քօղը վերցընել:

Կասդոն երկոյն ժամանակէ վերջը անդրադարձաւ որ կնիկն ամէն իրիկուն տնէն դուրս կ'եղէր, երբեմն մինաւորիկ, շատ անգամ Օլիվիէի հետ, և գացած տեղը չէր ըսէր:

Իրիկուն մը որ երկուքը նորէն դուրս ելեր էին, կասդոն ուղեց ծածուկ ետենէն երթալ: Բլրոյն կողին վրայ ժամը մը քալելէն ետքը, ճամբան խոտորածին պէս՝ կորսընցուց զանոնք. Ելաւ բլրոյն վրայ չորս դին նայեցաւ՝ բայց չտեսաւ զանոնք, և միտքը գնելով որ սպասէ՝ ցած պատի մը վրայ նստաւ, որ մամուզ և բաղեղամբ պատած էր: Քիչ ատենէն անդրադարձաւ որ նրատած տեղը գեղին գերեզմանատան պատն էր. ներս մտաւ, և կամաց կամաց քալելով՝ մի առ մի կը զննէր գեղջունակ գերեզմանները, որոնց զրեթէ ամէնը ծաղկրներու ու կանաչութեան տակ թաղուած էին: Երբոր ետ կը գառնար, մահուան դաշտին անկիւնը այծեթփիկներէ (Chèvregeuille) ու վարդենիներէ կէս մը ծածկուած մարմարին մը տեսաւ, վրան խաչ մը տընկած՝ զոր արևոն վերջին ճառագայթները կը բարեկէին: Մօտեցաւ և հետեւալ արձանագիրը կարդաց.

ՕԼԻՎԻԷ ՎԱՆԿՐԱՆ  
ՓՈԽԵԱԼ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ  
ԵՌԱՄԵԵԱՑ ԵՌԱՄՄԵԵԱՑ  
Ց ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1840

ԱՂՋԹԵԱ, ԶԱԽԱԿԴ ԻՄ ՍԻՐՈՒԵ, ՎԱՄՆ  
ՀՕՐ ԳՈՅԻՆ:

**Թ.**

Հասկրցաւ կասդոն ամեն բան :  
 Ճնկան վրայ եկաւ ու ճակատն հո-  
 ղուն տուաւ երկայն ատեն :  
 Երբոր գլուխը վեր առաւ, վալկրան  
 տիկինն ու որդին ոտքի վրայ դիմացը  
 կեցեր էին՝ պահապան հրեշտակնե-  
 րու պէս :  
 — Աստուած զինքը նորէն դարձուց  
 մեզի, սիրելիս, ըստ տիկինն՝ հօրը  
 գիրկը մղելով Օլիվիէն :

— Աստուած ողորմած է, պատաս-  
 խանեց կասդոն .  
 Եւ սրտին վրայ սղմեց տղան :  
 Այսօրուան օրս կասդոն կը հաւա-  
 տայ Նախախնամութեան, ըստ, և վեր-  
 ջացուց Մարիոյ այս պարզ պատմու-  
 թիւնը :

Յ. ՍԱՆՏՈՑ

**ՅԱՂԲԻԿԻՐՆ ՎԻՎԻԼ****ՏԱՂ**

Ի քեզ յոյր յորդ սափոր այս մարդք զարդարին,  
 Ամառն յերկնէ փայլեաց ի նուադ քառասուն,  
 Յորմէհետէ Հարսանցդ յաւէժ սիրային  
 Ըզհուսկ ետու զիմ ողջոյն :

Նոյն զարդ գեղոյ ծաղկէ զնոքօք բարեդէպ,  
 Ափունք կանաչ եւ նոյն բիւրեղ զովարար .  
 Համայնածախ աւուրց վրզեան անվըրէպ  
 Յիս լոկ ածեալ է խանգար :

Վեհն իկիս, հրսկող ելիցս հաշտ ի լցու,  
 Մնոյց զիս ի վայրս ոյց աղբերակնըդ տայ շուք .  
 Ա՛հ, զօդն ինձ ջինջ տուր՝ որ ի տիս գեռարոյս  
 Շընչեաց յիս բաստ անտաղտուկ :

Թէ հնար ինչ գոյ, տուր կեանս եւ միտս ինձ արծարծ,  
 Զերդ ի հովիտդ այդ զովագին, քաղցը ի յուշ,  
 Մէզն եւ ծաղկունք, յալեացդ համբոյր գըգուանաց  
 Ամ յամ փըթթին նոր քընկոյշ :

Բնդունայն իղձք . քաղցըիկ աւուրց սին պատկեր  
 Վիշտս յաւելու ցաւոց սըրտիս տըրտմալի .  
 Եղբայր իմ անդ, արբուն տիոցս իմ ընկեր  
 Գայր ինձ երբեմն առ երի :

Քայլիցս էր ցուազ . եւ մոացաթեւ խանդիւ գնայր  
 Առ մըշտագուարճ մարդացս ալեօք թափառուտ .